

Ռ. Բ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱՌԱՋԱՎՈՐ ԲՆԱԳԵՏ ԲԻՇԿ
ՆԱԶԱՐԵԹ ՏԱՂԱՎԱՐՅԱՆԸ

Արևմտահայ բնագետների միջ ահանավոր դեմք է Նազա-
րեթ Տաղավարյանը, որի մասին անցյալում թեև գրվել է, մա-
նավանդ արևմտահայ մամուլում, բայց դեռևս մանրամասն, ամ-
փոփ կերպով ի մի չի բերվել նրա եռանդուն, բազմամյա և
բաղմակողմանի հասարակական ու գիտական գործունեությունը:

Բիոլոգիական գիտությունների և ընդհանրապես բնապատ-
մական գիտելիքների տարածման ու ժողովրդականացման բնա-
գավառում Տաղավարյանը մեծ գործ է կատարել ոչ միայն արև-
մտահայերի, այլև առհասարակ հայերի համար: Նրա բիոլոգիա-
կան, բժշկագիտական աշխատությունները հարգված և ընդուն-
ված էին նաև Տաճկաստանից դուրս, հայաշատ վայրերում: Տա-
ղավարյանն առաջինն է հայ բնագետներից, որ աշխատություն
է գրել դարվինիզմի մասին, ջերմ պայքար մղել հանուն այդ
ուսմունքի, հիմնադրել հայկական առաջին դուռ բնագիտական
«Գիտական շարժում» ժուռնալը: Բազմակողմանի բնագետ է նա:
Բնագիտության տարբեր ճյուղերի ուսումնասիրությունը նրա
համար միջոց է եղել լուսավորելու ազգս, սնտախաղաղ հաս-
կացողություններով վարակված ժողովրդական մասսաներին, մի
միջոց, որ ծառայել է հայ հասարակության կուլտուրայի բարձ-
րացման գործին:

Կյանքից կտրված դիտնական չէր նա. տեսականն ու գործ-
նականը նրա համար միասնաբար շաղկապված էին, տեսականի
ուսումնասիրությունն ինքնանպատակ չէր, այլ միջոց՝ գործնա-
կանում, մարդկային կյանքում կիրառելու գիտությունն նվաճում-
ները՝ ժողովրդի բարօրության ու կուլտուրայի բարձրացման հա-
մար: Այդ պատճառով էլ նա լրջորեն ուսումնասիրել է գյուղա-
տնտեսությունը, բժշկությունը: Նրկու ուղղությամբ էլ նա

անմիջական տշխատանք է տարել՝ միաժամանակ օգտագործելով իր բնագրական կրթությունն սկզբունքային, աշխարհայացքային պրոբլեմների պրոպագանդայի համար:

Տաղավարյանի անստորագիր կենսագրականի¹ հեղինակը հետևյալ կերպ է բնութագրում նրան.

«Մեկն այն հազվագյուտ անձերն, որոնք իրենց հմտության ու կարողության չափով նշանակալի գործ մը տեսած են, և իբր այդ մեր ժողովրդին համար բարիքներ դարձած: Տղթնադարի Տաղավարյանն է, գրեթե ինքնօգնությամբ հառաջացած երիտասարդ մը, որ շատ կանխահաս հայտնություն մը ունեցած է, և որուն գործունյա կյանքին պատկերացումը անշահաբար պղտլիկ դաս մը չպետք է ըլլա մեր նոր սերունդին»:

Տաղավարյանի բուն գիտական գործունեությանն անցնելուց առաջ՝ անհրաժեշտ է մի քանի խոսքով նշել նրա կյանքի կարևոր մոմենտները:

Տաղավարյանը ծնվել է 1862 թվին հոկտեմբերի 25-ին Սեբաստիայում: Տարրական կրթությունն ստացել է Պոլսում, ուր յոթ տարեկան հասակում ընդունվել է Սկյուտար-Սելամեթի ազգային վարժարանը, ապա Ղալաթիայի Լուսավորչական վարժարանը: Այդ վարժարանը՝ շնորհիվ իր ղեկավար Ստեփան Փափաղյանի, այնքան լավ էր կադմոսկերպված ուսումնական տեսակետից, որ բարձրագույն դպրոցի ապավորություն էր թողնում: 1878 թ. ավարտում է դպրոցը, ապա գնում է Ֆրանսիա: Այնտեղ մի ամբողջ տարի նա աշխատում է ագարակներում, որպես պարզ բանվոր, ապա մտնում Փարիզի Ներկագործական վարժարան, որի ուսումնական ծրագրի համաձայն՝ շրջում է Ֆրանսիայի մի շարք վայրերում, ապա էլ լիսսոնում և Անգլիայում: Վերադառնալով՝ ներկայացնում է մի աշխատություն Ֆրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի երկրագործության մասին, որի համար և արժանանում է իր ուսուցիչներին մեծ դնահատականին:

Գյուղատնտեսությունն ավելի բազմակողմանի ուսումնասիրելու համար Տաղավարյանը կապվում է ծառաբուծական և այգեգործական վարժարանների հետ: Այսպիսով, ավարտելով մի քանի մասնագիտացման դպրոցներ՝ նա ստա-

¹ Ձեռագիր. տես Տաղավարյանի արխիվ (Հայ բժշկության և բժշկագիտական պատմության սեկտորի թանգարանում):

Նույն է «գյուղատնտեսութեան ինժեներ» (Ingenieur Agronome)
կոչումը:

Ֆրանսիայից վերադառնալով իր ծննդավայր Սերաստիան,
նա հանձն է առնում դպրոցի ղեկավարութիւնը, և միաժամա-
նակ աշխատում է «Իւր թեկնածու Սերաստիո երկրագործու-
թեան քննչութեան պաշտօնին» (Ձեռագիր կենսագրական,
էջ 10):

Սերաստիայում չեն կարողանում դնահատել գիտութեան
հետազոտարարին: Նրա բոլոր փորձերը դպրոցը նոր լավ հիմքերի
վրա դնելու, նրա փորձերը գիտութեանը ժողովրդականացնելու
ուղղութեամբ շարժում են խավարամիտների ճահիճը, առաջ բե-
րում նախ խուլ դժգոհութիւն, ապա և բացարձակ հակառա-
կորդների մի ամբողջ խումբ: Տաղավարյանը ստիպւած է լի-
նում հեռանալ Պոլիս, ուր 1885 թվից հանձն է առնում Գատը
գլուղի արեւմտյան-վարժարանի ղեկավարութիւնը: Այստեղ էլ
աշխատում է նույն ծրագրով, նույն եռանդով, առաջադիմա-
կան բարեփոխումներ է մտցնում, բարձրացնում դպրոցի ուսում-
նական որակը: Նրա օրոք դպրոցը լավագոյն կրթական օջախ-
ներից մեկն է դառնում: Սակայն այստեղ էլ խավարամիտ հոգա-
բարձութիւնը չի կարողանում հաշտվել Տաղավարյանի նոր
քաղաքականութեան հետ: Դպրոցի վերակառուցման հարցում:
Տաղավարյանը նորից թողնում է իր մանկավարժական գործու-
նեցութիւնը և, ընդունելով երկրագործական մի կարեւոր հիմ-
նարկի հրավերը, գնում է Նգիպտոս: Այնտեղ էլ չկարողանալով
ենթարկվել ստեղծված աննպաստ պայմաններին՝ նա ուղևորվում
է նորից Փարիզ, այս անգամ բժշկութիւն սովորելու համար:

Սորբոնի համալսարանում նա լսում է մի շարք բնագի-
տական դասընթացներ, ապա 1891 թվին ավարտելով ստանում
է «Licencié ès science» կոչումը: Բացի բժշկութիւնից Պաս-
տյորյան Ինստիտուտում նա ուսումնասիրում է բակտերիոլո-
գիան և ավարտելով այդ դասընթացը՝ ստանում է հատուկ
վկայական: 1893 թվին նա լրիվ ավարտում է բժշկական կրթու-
թիւնը և, ներկայացնելով «Միգային քաբերի կազմութիւնը»
աշխատութիւնը, ստանում է բժշկականութեան դոկտորի աս-
տիճան:

Ինչպես տեսնում ենք, Տաղավարյանը թե ընագետ է, թե
գյուղատնտես, թե բակտերիոլոգ է և թե բժիշկ: Պետք է ավե-

լացնել, որ նա գրել է նաև մի շարք բանասիրական աշխատություններ:

Վերադառնալով Պոլիս, նա աշխատում է Ս. Փրկչի հիվանդանոցում իբրև բժշկապետ ներքին հիվանդությունների բաժնում, ինչպես նաև՝ որպես օժանդակ բժիշկ Ֆրանսիական հիվանդանոցում:

Ահա Տաղավարյանի անցած կյանքի ուղին: Նրա կյանքը թեև ողբերգականորեն կտրվում է 1915 թվին, երբ նա բաղմաթիվ պոլսահայ մտավորականների հետ գոհվում է անսուղի վայրում:

Տաղավարյանն իր կյանքի ընթացքում գիտություն էնտուզիաստ էր, մի մարդ, որ տեսականը կապում էր գործնականի հետ, չէր կտրվում հասարակական կյանքից, պայքարում էր հանուն առաջավոր գիտության: Նա զգաց բնագիտության, առհասարակ գրական գիտությունների մեծ պահանջը մետաֆիզիկայի, իգեալիզմի գաղափարներով վաբաղված հայ իրականության համար:

Տաղավարյանը պայքարի հրապարակ է դուրս գալիս ոչ միայն վառվռուն բանավոր խոսքով, կարգալով բազմաթիվ գիտական դասախոսություններ, այլև գրում է մի շարք գիտական աշխատություններ, բազմաթիվ բնագիտական ակնարկներ:

Սերաստիայում եղած ժամանակ նա հիմնում է «Հայուհյաց ընկերությունը», որի վրա է դնում «աղջկերանց վարժարանի» խնամակալության խնդիրը: Դպրոցից դուրս հիմնում է կիրական օրյա վարժարան՝ ժողովրդական մասսաներին կրթելու, դաստիարակելու, բնագիտական գիտելիքներ ապուր նպատակով:

Այժմ անցնենք Տաղավարյանի գիտական-գրական աշխատանքներին: Բարձր գնահատելով գրական գիտությունների նշանակությունը հայ լայն մասսաների կուլտուրական վերելքի հարցում՝ Տաղավարյանը մեծ եռանդով նվիրվում է բնագիտական գիտելիքների տարածման վեհ գործին: Նրա օրոք հայ ընթերցողը բնագիտությանը ծանոթանում էր տարրական դասագրքերի և իդեալիստական ոգով գրած փոքրաթիվ հրատարակությունների միջոցով: Մեր իրականության մեջ լուրջ գիտական պրոբլեմները շատ անգամ անմատչելի էին մնում շնորհիվ այն բանի, որ չկար հասկանալի և ընդհանրացած գիտական տերմինոլոգիա: Այս ուղղությամբ մեծ խնդիր էր դրված հայ բնա-

գետները առաջ, Մխիթարյանների հրատարակած բառարանները չէին կարող բավարարել նոր մասնագիտական ընագիտական դիպցիպլինների տերմինոլոգիական պահանջները։ Անհրաժեշտ էր եղածը սառուգել, ճշտել, ապա նորից հորինել։ Տաղավարյանը մի շարք տերմիններ հայացրեց, որպեսզի նրանց իմաստն ավելի հասկանալի լինի։

Տաղավարյանի գրական-դիտական աշխատությունները հիմնականում ընագիտական են, կան նաև ընագիտական, բժշկական, դոկտամոստեսական, զուտ բժշկական, ասպա և բանասիրական։ Բնագիտական աշխատությունների մեջ աչքի են ընկնում մի քանի հատորից բաղկացած «Բնական պատմությունը», «Կենդանաբույսությունը» (ձեռագիր), «Մարդկային սաղմնախոսությունը», «Մանրաբանությունը» (նաև տաճկերեն լեզվով), «Ծննդական գործարանը», «Մանրեք և անոնց շահատակությունները», «Առողջապահություն», «Բժշկարան», «Բառացուցակ ախտանվանց», էվոլյուցիոն ուսմունքի մասին՝ «Տարվինականությունը», ոչ բիոլոգիական բնույթի՝ «Տիեզերքը և նրա կազմությունը» (նաև ֆրանսերեն լեզվով), «Հյուսիս» նյութի կազմության մասին, «Աղավթոն» (գյուղատնտեսական)։

Բանասիրական աշխատություններն են՝ «Հայոց հին կրոնները», «Ծագումն հայ տառից», «Մեքավադի պատմության Հայոցի սկզբանի մինչև ցԱրշակունի հաստատություն», «Քրիստոնեություն, բողոքականություն և գրգռաշներու աղանդին ծնունդը» և «Հին կրոններու ծագումը»։

Բացի առանձին հրատարակություններից՝ նա լույս է ընծայել «Երկրագունդ» և «Գիտական շարժում» գիտական հանդեսներում, «Ծագիկ» և «Լույս» ժուռնալներում բիոլոգիայի, բժշկություն, քիմիայի ընագավառներին նվիրած բազմաթիվ ընագիտական ակնարկ հոգվածներ։

Թվարկածա աշխատություններից «Բնական պատմությունը» հրատարակվեց 1888 թվին։ Դրա Ա. հատորն ընդգրկում է հյուսվածաբանություն, մարդու կազմախոսություն և բնախոսություն գլուխները։ Գրքին կցված է գիտական տերմինոլոգիական բառացուցակ։ Առաջաբանում հեղինակը նշում է, որ «Աշխատության գլխավոր առաջնորդներն եղան մեծահմուտ ուսուցիչներս Ռինյուս, Պլանշար, Փախու, Վեքս, Բառնո և այլ երեսնի մոտ ամենակարևոր հեղինակաց և գիտնոց գործերն»։ Ինչպես տեսնում ենք, Տաղավարյանը հիմնվել է ժամանա-

կտելից ականաւորը բնագիտներ լըտու Գիտական ձեռնարկի նպատակը նա աշարկս է բնորոշում. «Հայն, գիտութեանց ամեն ճշուգեբաւ մասին այսօր, ունի գոնե տարրական մատչաններ, առաջնորդներ, որք օր քան զօր կկատարեալագործվեն, սակայն բնապատմական գիտութեանց մասին ոչինչ ունի ցարդ առաջնորդ անվան արժանի»:

«...Ներկայիս հինգ տարիներ առաջ Փարիզ էի՝ ուսանող բնութեան երեւութից և հրաշից. աշացա առջև ներկա էր Ալգիս վիճակն, որո ծառայել ուխտած էի տարիներ առաջ, անդ որոշեցի գիտական աշխատութեամբ կատարել զիմ ուխտ, որով կհուսայի ավելի օգտակար լինել նմա...»:

Հեշտ գործ չէր այդ, մանավանդ գիտական տերմինոլոգիա հորինելու խնդիրը, որի մասին առաջաբանում նա որոշ գիտություններ է անում: Ըստ Տաղավարյանի «գրաբարն առ Եղմեմեմ դժվարութեաններ կընծայի», բայց չնայած գրան՝ նա չի մերժում այդ չգործածվող լեզուն և բացարձակապէս բնզունում աշխարհաբարը, այլ որոշում է «այդ երկուքին խառնուրդ մը ընտրել և կամ լավ ևս է ասել, աշխարհաբարով անբացատրելի ձևերու և ոճերու քացատրութեան համար գրաբարին դիմել»: Նա պահանջում է, որ տերմինները հայերէն լինեն: Վերցնելով Գալիլէոյ գեպքում ճշտում է եղածը և կամ հնարում նորերը: Հեղինակի ասելով, նա «ուղղել ջանացած էր նուշինսկ բազմաթիվ եվրոպական բառեր, որք տրամաբանորեն սխալ գործածված են»:

Գրքի առաջին հատորում նա բավական ընդարձակ շարադրում է հյուսվածաբանութեան տարրերը, խոսում մարդու մարմնի բջջային, հյուսվածքային կազմութեան մասին, մանրամասն տալիս է մարդու մարմնի անատոմիան և ֆիզիոլոգիան և այդ բոլորը պատկերազարդված են լավ նկարներով:

Մեծ և կարևոր աշխատութեան է «Բնական պատմութեանը»: Հայ ընթերցողը այդ աշխատութեամբ ծամանակակից գիտական տվյալների սահմաններում ծանոթանում էր բնութեան երեք աշխարհներին: Այդ աշխատութեանը սխառմանակ դարոցակտն ձեռնարկ էր:

Տաղավարյանն առաջին հայ բնագիտն էր, որ ոչ միայն խոշոր նշանակութեան էր տալիս սաղմնաբանութեանը, այլև վերջինիս վերաբերյալ կազմել էր երկու աշխատութեան, որոնցից մեկը զուտ բիոլոգիական բնույթի—«Սաղմնաբանութեան»,

մյուսն ավելի փոքր և բերդաբերական-բժշկական բնույթի—«Ծննդա-
կան դործաբանք», Հայ անցյալի դործիչներեց տակալին Մի-
քայել Նալբանդյանը նշել է այդ գիտության խոշոր նշանակու-
թյունը իդեալիստների դեմ ուղղված պայքարում, շեշտել նրա
մատերիալիստական, հակադոկտրինական էությունը։ Տաղավարյանն
էլ, որպես մատերիստ-բնագետ, լավ էր հասկանում դրա նշա-
նակությունը։ «Սաղմնախոսությունը» գրված է ժամանակակից
գիտական պահանջների համեմատ։ Գրքի սկզբում նա շարադրում
է սաղմնաբանական բնդհանուր խնդիրները, ապա պատմական
աղնարկ է տալիս պրեֆորմիզմի և էպիգենետիկ թեորիաների մա-
սին։ Նա այսպես է բնութագրում պրեֆորմիզմը.¹ «Կենդանի-
ների և բույսեր իրենց նման ուրիշ մը չեն արտադրեր, այլ ար-
դեն իրենց մեջ կարողնական դայնս, որպես մեծ տուփ մը կը
պարունակե ուրիշ մը անշուշտ իրմե փոքր և միևնույն ձևով։
Այս վերջինն երբորդ մը, երրորդն ևս չորրորդ մը, այսպես շա-
րունակաբար» (էջ 9)։ Այս թեորիայի երկու հոսանքների՝ օվիստ-
ների և անիմալիզիստների մասին նա ասում է հետևյալը.—
բոլոր օվիստների սաղմը հասուն օրգանիզմի տեսքով պատրաստի
ներփակված է ձվի մեջ, ապա դառնալով անիմալիզիստներին,
նշում է. «Սերմնակենդանից գյուտիս վրա (1667) կարգ մը գի-
տուններ սկսան խորհիլ, թե ապրող մարմնոց ընձյուղներն ավելի
սերմնակենդանից մեջ ներփակյալ են քան ձվիներուն» (էջ 10)։

Բերելով այդ երկու հոսանքների բանավեճը՝ նա ասում է.
«Ներփակական տեսության այս երկու ձևերու վրա կվիճեն։ Հեռ-
վե փորձեց տապալել այս թյուր վարդապետությունը, սակայն
Ֆուստերիք Վոլֆ միայն մասամբ հաջողեցավ 1754-ին ցուցնե-
լով թե մարմնոց դանազան դործարանք գոյություն չունեն սաղմ-
նային վիճակին մեջ, այլ հետզհետե կկաղմվեն, ուստի և ֆ. Վոլֆ
արդար իրավամբ սաղմնախոսության հայրը կրնա համարվի»։

Տաղավարյանը համաժխտ է Վոլֆի տեսությանը՝ ընդու-
նելով սաղմի էվոլուցիոն զարգացումը բջջից մինչև հասուն
վիճակը։

Ներածության մեջ նա ընդհանուր գծերով կանգ է առնում
սեռական օրգանների կազմության վրա, խոսում սեռական
բջջիների մասին, ապա շարադրում է հետևյալ բաժինները.
«Անկերպարան սաղմն և սաղմի օժանդակ մասերն ու պատյան-

¹ Ըստ Տաղավարյանի՝ «Ներփակական տեսություն»։

ներն», «հաղմություն սաղմի գործարանաց»։ Վերջում գիրքն ունի բառացուցակ։

Այս աշխատությունը ցարդ միակ ինքնուրույն գործն է եղած, որ մասէիլի է սովորական հայ ընթերցողին։ Ժամանակակից մամուլը, հարկավ, արձագանքեց այդ գրքին։ Բաղմաթիվ գրախոսականներ շնորհեցին նրա կարևորությունը։

Հովսեփ Գյումճյանը «Արևելյան մամուլում» (1900 թ. № 15) գրում է. «Մաղմնախոսության պեսնոր գիտության մը հարուցումը արդեն ինքնին մեծ գնահատականի արժանի է»։ Գրախոսներ կողմից իրավացիորեն առաջարկում է ավելացնել գրքին ևս մի գլուխ՝ «Բաղդատական սաղմնախոսություն և անոր հետևանքները», որն, անշուշտ, ավելի կբարձրացնէր աշխատության նշանակութիւնը էվոլուցիոն ուսմունքը յուրացնելու տեսակետից, քանի որ մարդու և մի շարք կենդանիների սաղմերի զարգացման ստադիաների համեմատութիւնից ընթերցողը բնականորեն կբխեցնէր մարդու ազգակցությունը կենդանիների հետ։ Բայց Տաղավարյանի արածն էլ մեծ գործ էր, որը պատուում էր մարդու սաղմի զարգացման պրոցեսի էութիւնը ծածկող միաստիկական փողը։

Տաղավարյանն ավելի հեռուն գնաց, նա բժիշկ էր։ Նրան ծանոթ էին հասարակության մեջ ընդունված թյուր հասկացողութիւնները, այլանդակութիւնները, սեռական պրոցեսի հետ կապված։ Չբավարարվելով բանավոր խոսքով՝ նա հրատարակեց մի աշխատութիւն սեռական օրգանների կազմութիւն և սեռական պրոցեսի մասին՝ «Ծննդական գործարանը» վերնագրով (կազմախոսութիւն, բնախոսութիւն, առողջապահութիւն)։ Երիտասարդութիւն սեռական դաստիարակութիւն խնդրին նա մոտենում է որպէս բնագետ, մանկավարժ, բժիշկ։ Նրա նպատակն էր ցույց տալ, որ սեռական պրոցեսը նույնպիսի անհրաժեշտ և բնական պրոցես է, ինչպէս մարսողութիւնը, շնչառութիւնը և այլն։ Ծիշտ գաղափար տալ սեռական կյանքի մասին, կանխել, արմատախիլ անել այդ պրոցեսի թյուր հասկացողութիւնից բխող բոլոր այլանդակութիւնները, չարիքները, հիվանդութիւնները, — ահա նրա հիմնական նպատակը։ Բիոլոգի, բժշկի տեսանկյունից մոտենալով խնդրին, Տաղավարյանը համապատասխան բազմաթիվ նկարներով, հանրամատչելի լեզվով լուսաբանում է կարևոր բիոլոգիական պրոցեսը։ Կեղծ բարեպաշտները, խավարամիտները «անբարոյականութիւն» էին համարում

բացարձակ անկեղծությամբ սեռական պրոցեսի մասին խոսելը: Տաղավարյանի գիրքը շատ համարձակ քայլ էր: Չարմանալի չէ, որ այդ աշխատության շուրջը բռնկվեց ուժեղ պայքար: Մամուլի էջերում թեր ու դեմ կրքոտ գրախոսականներ լույս տեսան: Թավրիշից դուրսը փաշայանը նշում է, որ «Շատ հաջող և բոլոր չափահասներու օգտակար և անհրաժեշտ գիրք մըն է» («Արևելյան մամուլ», 1899 թ., № 18), մինչդեռ զայրացած գրախոս Կեսարը («Հանրապետակ», 1877 թ., № 11, 19) ասում է. «Այդքան «տեղութեան» գիրք մը՝ ոչ միայն մեր երկրին մեջ պարոցի աշակերտի մը, այլ նույնիսկ աշխարհի էն աղատամուլ ազգաց չէ թե թաղային, նույնիսկ բժշկական վարժարանաց ուսանողներուն անգամ իբր գոսազիրք՝ չեն հանձնել պաշտոնագետ» (էջ 1003): Դառնալով Տաղավարյանին ավելացնում է. «Այդ գրքով, չէ թե բարոյականը, այլ բացարձակագետ անբարոյական դասախոսած եք, Տիար Տոքդոն» (էջ 1004):

Բնագետները, բժշկիկները բարձր գնահատեցին գիրքը, կեղծ բարեպաշտները հայոյանքներ ուղղեցին Տաղավարյանի հասցեին:

Կեսարի նման քննադատների գրախոսականներից արգեն երևում է, թե որքան այժմեական էր Տաղավարյանի բիոլոգիական-բժշկական բնույթի աշխատությունը:

Դուրսը Վահեն «Մասիսում» (1899 թ. հունիսի 10) Տաղավարյանի գիրքն ապտակ է համարում «բոլոր կեղծավորների և շողոքորթողների երեսին»: Նա գրքի հրատարակությունը տեսնելի է համարում, քանի որ «ամեն չափահաս արևելացին գիտե, — գրում է նա, — թե մեր երկրի մեջ սեռային կյանքն ունի իր մուրրանքը, որոնք ոչ ավելի հաղվադեպ են և ոչ ալ կտարբերեն Արևմուտքի մեջ եղած ծանոթ մուրրումներեն»:

Տաղավարյանի «Ծննդական գործարանք» աշխատությունն ունեցավ մեծ դաստիարակչական, կուլտուրական նշանակություն:

Տաղավարյանն իր բնագիտական գործունեության ասպարեկում խոսում և գրում. էր այնպիսի պրոբլեմների մասին, որոնք մատերիալիստական էին իրենց էությունով, ունեին խոշոր գործնական նշանակություն և զարկ էին տալիս մասսաների կուլտուրական-գիտական դաստիարակությանը:

Տաղավարյանի բազմերիտոգիական կրթությունը ապարդյուն չանցավ: Նա գրեց երկու աշխատություն — մեկը ընդար-

ձեռքը՝ «Մանրեաբանություն» (որ լույս տեսաւ նաև տաճկերեն), մյուսը համառոտ՝ «Մանրեք և անոնց շահատակությունները» (վերջինս իր կարգացած դասախոսությունն էր)։

Հայ ընթերցողի համար այս աշխատությունները ևս նորություն էին։ «Մանրեաբանության» նախաբանում Տաղավադյանը բերում է ժամանակակից նշանավոր բակտերիոլոգ Դյուկլէյի դրական գնահատականը գրքի մասին։ Դյուկլէյն ծանոթացել էր գրքի պլանին և, մոտավորապես գաղափար կազմելով ընդանդակության մասին՝ գրել հեղինակին. «Ինձ կ'իվի, թե շատ բան կ'պարունակե Ձեր երկն տրամաբանական շարքով մը արտահայտյալ։ Թե հայկական և թե տաճկական հրատարակությունները պատկերազարդված են բազմաթիվ հաջող նկարներով։

Բիոլոգիական վերահիշյալ երկու աշխատությունների մեջ առավել բժշկական հարցերի հետ կապակցված բակտերիաների բիոլոգիան, Տաղավարյանը մանրամասն խոսում է տարբեր տեսակի օգտակար և ֆլուսակար բակտերիաների մասին (ըստ հեղինակի տերմինաբանության՝ «անմեղ մանրեններ, խմորիչ, նեխիչ, դույնարատդրիչ, լուսատու, մարսիչ, հիվանդաուիթ» և այլն), ապա շոշափում գործնական հարցեր, ինչպես՝ «բնական վայր մանրից», «մշակություն մանրից», «բնություն մանրից», «հիվանդությունը և մանրեք», «ինքնապաշտպանություն կենդանյաց»։

Բազմաթիվ գրախոսականներ բարձր գնահատեցին նաև այս աշխատությունները։ Այսպես, բժ. Վահան Արծրունին «Մանրեաբանության» մասին «Մշակում» (1898 թ. № 43) նշում է. «Այս ուսումնասիրությունը զարմանալի կերպով ընդարձակում է մարդու հայեցաշրջանը, կամա-ակամա բաց է անում, այսպես ասած, բնության ծալքերը, հեղաշրջում է մեր փիլիսոփայական հայացքները բնության վրա»։

Վեճի առարկա են դառնում Տաղավարյանի առաջադրած տերմինները։ Իր սովորության համաձայն՝ նա այս գրքի վերջում էլ զետեղում է տերմինաբանական մի ցուցակ, որի մեջ հարյուրի չափ բառ-տերմիններ հեղինակի հորինածն են, օրինակ՝ օգակաց (աերոք), գնդամանրե (coccus), հյութազատություն—excretion, թրթռուկ—vibrio և ուրիշները։

Ոորթ է հնչում, երբ նա հայացնում է բավական գործածական և ընունված հետևյալ օտար տերմինները. Jndol—լիզա-

կյուղ, Méningite—խելապատակատապ, ֆագոցիտ—ուտիչ բջիջ-
Streptococcus—համարչաշար և այլն:

Մենք կանգ չենք առնում Տաղավարյանի գուտ բժշկա-
կան աշխատություններն Վրա, ինչպես նրա շատ ընդարձակ
«Բժշկարանը», «Առողջապահությունը» կամ գիտական ուսումնա-
սիրությունը միդաքարերի մասին, ապա նաև տարբեր հանգե-
սերում ցրված բժշկական ակնարկները: Դրանով անշուշտ պետք
է դրադիկն մեր պատմաբան բժիշկները, վերհանելով Տաղավա-
րյանի ոչ պակաս եռանդուն գործունեությունը բժշկագիտության
ասպարեզում:

Սոսկելով վերոհիշյալ աշխատություններն մասին, մեր նպա-
տակն էր ի հայտ բերել և բնութագրել Տաղավարյանին որպես
բնագետ-բիոլոգի, նշել նրա ակնառու դերը հայ հասարակու-
թյան մեջ բիոլոգիական բազմաթիվ պրոբլեմներ տարածելու
բնագավառում, պրոբլեմներ, որոնք խոշոր նշանակություն ունեն
բնագիտական-մատերիալիստական աշխարհայացքի զարգացման
հարցում, ինչպես նաև մեծ նախով կապ ունեն բժշկության հետ:
Իհարկե, առանց բիոլոգիական հիմնական հարցերի պարզաբան-
ման անկարելի է զարգացնել գիտական բժշկականությունը,
անհնարին է ազատել մարդկանց սնոտիապաշտության, նախա-
պաշարունակների խավարամտության կապանքներից:

Տաղավարյանը հասկանում էր, որ բիոլոգիան բավական չէ
մատերիալիստական աշխարհայացք սերմանելու գործում: Անհրա-
ժեշտ էր անցնել քննադիտության մի այլ բնագավառ, այն է՝ ան-
կենդան աշխարհի երևույթներին, որ հիմք էր հանդիսացել կեն-
դան աշխարհի համար:

Նախ ֆրանսերեն, ապա հայերեն (ուրիշի թարգմանու-
թյամբ) Տաղավարյանը լույս է ընծայում իր կազմած՝ «Տիեզերք
և իր կազմությունը» աշխատությունը: Վերջինս ամփոփում է
նրա այն գեկուցումները, որ նա 1892 թ. կարդացել էր աստղա-
գիտության և տիեզերագիտության մասին Փարիզի մի գիտա-
կան ընկերության երեք կոնֆերանսներում: Գլխավոր հրատարակ-
ված է Պոլսում և հաջող նկարագրված: Այդ գրքում մի համառոտ
պատմական ակնարկից հետո, ելնելով ժամանակակից տվյալնե-
րից, նա խոսում է արեգակնային սխտեմի (մոլորակներ, արե-
լուսին, գիսաստղեր, մետեորիտներ, բոլիդներ), ինչպես աստղե-
րի, միգապաանների մասին և այլն: Վեցերորդ գլխում խոսում է
երկրի ձևի, ծավալի, լեռնակազմական պրոցեսների, ապա ֆաու-

նայի և ֆլորայի փոփոխութեան մասին ըստ երկրաբանական էրաների. միաժամանակ նա նշում է մարդու հայտնութեան շրջանը, բայց չի հիշում հայտաբերված նախամարդկային բրածոները կամ այն կենդանիներին, որոնցից առաջացավ-զարգացավ մարդը:

Տաղավարյանն այդ աշխատութեամբ չի բավարարվում: Որպէս բնագետ-մատերիալիստ, նա չէր կարող անուշադիր թողնել մի այնպիսի հիմնական պրոբլեմ, ինչպիսին էր նյութի կազմութիւնը, ատոմիստական թեորիան: Նա գրում է «Հյուլե» (ատոմ) անհարկը, որ նախ՝ լույս էր տեսել Թեոդիկի «Ամենուն տարեցույցում», ապա 1914 թվին առանձին բրոշյուրով:

Հիշյալ երկու աշխատութիւնները՝ թեև էպիզոդիկ էին Տաղավարյանի բիոլոգիական-բժշկական-գյուղատնտեսական գործերի մեջ, այնուամենայնիվ չի կարելի պատահական համարել բազմակողմանի կրթված մատերիալիստ-բնագետի համար: Հանուն մատերիալիստական աշխարհայացքի Տաղավարյանի մղած պայքարի գործում մեծ նշանակութիւն ունեցան վերոհիշյալ պրոբլեմները, որոնք սերտորեն կապված էին էվոլուցիոն գաղափարի հետ:

Մենք արդեն ասացինք, որ Տաղավարյանը միաժամանակ գյուղատնտես էր: Տաղավարյանի գործունեութեան լուրջ ուսումնասիրութիւնն այդ ուղղութեամբ համապատասխան մասնագետների գործն է: Մենք թեթևակի կանգ կառնենք նրա մի մեծածավալ (մոտ 15 մամուլ), մաքրագրած ձեռագիր աշխատութեան վրա, որ կրում է «Կենդանաբուծութիւն» վերնագիրը: Տաղավարյանի արխիվում պահպանվել են նաև այս գործի նախնական սեագիր նյութերը—առանձին գլուխների վերաբերյալ մեջբերումներ, դանազան կարևոր տվյալներ, պլաններ, ապա այս կամ այն օտար հեղինակների գրքերից կտրած նկարներ (կլիշեներ համար), հայացված նիշերով: Նյութը բաղկացած է մի քանի հատորից: Գիրքն ունի հետևյալ պլանը՝ կենդանու անատոմիան, բիոլոգիան, նրա արդյունաբերական նշանակութիւնը, բուծման եղանակները, հիվանդութիւնների բուժման մեթոդները և այլն: Այստեղ կան ընտանի կաթնասուններ, թռչուններ: Խոսվում է նաև մեղվաբուծութեան, շերտմապահութեան, ձկնաբուծութեան մասին և այլն: Տալիս է տեղեկութիւններ նույնիսկ պակաս արդյունաբերական նշանակութիւն ունե-

ցող կենդանիներն մասին (օրինակ՝ «ստորնաժակություն», «մարդարտաբեր խարուկ», «խխունջամշակություն», «տածումն խեցգետնից», «աղբուկամշակություն» և այլն)։

Ժողովրդի իրական կարիքն է ստիպել Տաղավարյանին գրելու հիշյալ կենդանաբանական-գոտտեխնիկական աշխատությունը։

Բացի այդ՝ Տաղավարյանը գրել է մի շարք ակնարկներ նաև պարբերական մամուլում («Մասիսում» 1883 թ. և ուրիշ տեղ) — «Ֆիլոսոֆիայի մասին»։ Արժեքավոր է նրա «Երկրագործության դերը, իր վիճակը ու դարձանները», մասնավոր «Երկրագործության շարժումն ի թուրքիա» հոդվածաշարը։ Գրել է նաև նշանավոր գյուղատնտես Աղաթոնի կենսագրությունը։

Տաղավարյանի նպատակն էր զարկ տալ գիտական կենդանաբանությանը, առարժեք կենդանիներին խնամելու, բուժելու և պահպանելու գիտական մեթոդները հայ գյուղական միջավայրում։

ՏԱՂԱՎԱՐՅԱՆԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՊՐՈՖԷՍՆԵՐԸ

Տաղավարյանին առանձնապես զբաղեցրել են բիոլոգիական գիտությունները, բիոլոգիական սկզբունքային պրոբլեմները։

Դեռ այն ժամանակ, երբ Տաղավարյանն ուսանող էր և մասնավոր, երբ՝ հվրոպական բնագիտական կրթությունն ստանալով, անցել էր հայ ժողովրդին ծառայելու գործին, մատերիալիստական պրոբլեմները նրա ձեռքում պայքարի դեմք դարձան։ Պայքարելով խավարամիտների, կղերականների դեմ, նա բանավոր խոսքը և գրիչը՝ ի սպաս դրեց հայկական ինտելիգենցիայի, ժողովրդական մասնանները իդեալիզմի կապանքներից ազատագրելու, նրանց մատերիալիստներն դաստիարակելու մեծ գործին։

Մենք արդեն թեթև ակնարկեցինք, որ բազմերանգ խավարամիտներն այդ պայքարում Տաղավարյանի դեմ հախուռն հալածանքներ սկսեցին։ «Երկրագունդ», «Գիտական շարժում» հանդեսներում «Դարվինիզմի» մասին հրապարակված հոդվածաշարը մեծ աղմուկ առաջ բերեց։ Բայց այդ մասին կխոսվի փոքր ինչ ստորև։

Այստեղ նշենք նաև հետևյալը, թե բիոլոգիայի ո՞ր պրոբլեմների մասին է գրել Տաղավարյանը։

Այսպես, իր հիմնած գուռ ընագիտական հանդեսում նա

տպել էր տարրեր ծածկանուններով հետևյալ նյութերը՝ «Կենդանի և մեքենա», «Քուլերա», «Ննջող, շարժուն, զգայուն և մասկեր տունկեր», «Մեռելոց մկանները», «Ազդակցական ամուսնութուն», «Բնակութուն և բնադրում», «Ինքնաձին սերում», «Մեղունների պատմությունը», ընդարձակ ակնարկ Պաստյորի, բնագետ Միլն Էդվարդսի մասին և այլն:

Այս նյութերի մեջ Տաղավարյանի աշխարհայացքի տեսակետից հետաքրքրական է «Կենդանի և մեքենա» ակնարկը («Գիտական շարժում» 1885 թ. № 1): Կենդանի օրգանիզմի էությունը պրոբլեմը սկզբունքային լուրջ հարց է: Դեկարտը, ապա ավելի մեծ չափով Դե-Լամետրի նույնացնում էին մարդու օրգանիզմը և մեքենան, կենսական երևույթները և մեխանիկական երևույթները: Մեխանիստական մատերիալիզմի ականավոր ներկայացուցիչները—Մոլեշոտ, Ֆոխտ, Բյուխներ և այլն, նույնացնում էին կենդանի մարմնի պրոցեսներն և ֆիզիկո-քիմիական պրոցեսները: Տաղավարյանն իր ակնարկում շարադրում է մեխանիստ-մատերիալիստների պատճառաբանությունները: Նրանք դատում են այսպես. «Մարդիկ և կենդանիք շոգեշարժ մեքենայից հար և նման են»: Երկուսին էլ անհրաժեշտ է ածուխ (նկատի է առնվում ածխածին) և օդ (թթվածին), երկու դեպքում էլ արտադրվում է ջերմություն, ածխածինը դադ: Մարմնի մեջ, նախ՝ սնունդը պիտի մարսվի, հեղուկանա, մտնի արյան մեջ, և ինչպես ասում է Տաղավարյանը՝ «այն տառն միայն ճիշտ մեքենայից ածուխին կհամապատասխանեն»: Երկուսի մեջ էլ տեղի է ունենում այլման պրոցես: Վիբլինիս մասին Տաղավարյանը թերի մեկնաբանություն է տալիս. նյութերը «պետք է այրվեն, ուր—թոքերում մեջ, այո, այս գործարարին մեջ»,—համաձայնվում է նա և ավելացնում, որ թոքերը «կենդանայաց կրակարան է», իսկ «ածխահան—քիթ, բերան, խոչափող, շնչափող, ցնցուղ»: Այլման արդյունքը համարվում է «ածուխի չայրված մասը, քակորինք»:

Թեև Տաղավարյանը տրամադիր է ընդունելու մեխանիստական մեկնաբանությունը, բայց միևնույն ժամանակ այդ տեսակետին լրիվ համամիտ չէ, քանի որ չի կարող կենդանի օրգանիզմը նույնացնել մեքենային: Նա այսպես է պատճառաբանում իր ասածը. կենդանու կամ մարդու մարմինը, ճիշտ է, նույնպես կարիք ունի ածուխի (ածխածնի), բայց նրա ասելով՝ «ածուխը մեքենայի մեջ զբաղեցնում պես կրնա վառելը, իսկ

«սնունդը պիտի ձևավորվի, մարսվի վառվելու համար»։ Այս է Տաղավարյանի նշած յուրահատկություններից մեկը։ Մյուսը՝ «Մեքենան», —ասում է նա,—կմաշի, պետք է վերանորոգել, կենդանի մեքենան ամեն օր կվերականգնվի և ինքնին առանց ուրիշի մը պետք ունենալու» (էջ 24)։ Այս երկրորդ դրույթը ուշագրավ է և չի համընկնում մեխանիստական մատերիալիզմի դրույթին. դա մոտ է կենդանական պրոցեսների զիալեկտրիկական-մատերիալիստական մեկնարանությանը։

Տաղավարյանի դրույթն է. օրգանիզմը մեքենա չէ, բայց նրա պրոցեսները միևնույն ժամանակ թեև յուրահատուկ են, սակայն դերքնական չեն՝ «կենդանի մեքենան կվերականգնվի և ինքնին առանց ուրիշի մը պետք ունենալու» (ընդգծումը մերն է—Ռ. Գ.)։

Դարվինիզմի պրոբլեմներից է նաև կյանքի ծագումն անօրգանական աշխարհի նյութներից։ Պետք է նշենք, որ այս հարցում Տաղավարյանը ցուցաբերել է որոշ երկվություն. նրա դատողությունները որոշակի բնույթ չեն կրում։ Այս հարցում թերևս նրա վրա ազդել է ժամանակակից հայկական հետաքննարկող միջավայրը։

«Դիտական շարժում» հանդեսում Տաղավարյանը դեռևս դում է մի ակնարկ «ինքնածին սերունդին» վերնագրով։ Նյութը վերաբերում է կյանքի ինքնագոյացմանը, մի պրոբլեմի, ուրի վերջնական լուծումն ունենր խոշոր նշանակություն մատերիալիստական աշխարհայացքի համար։

Ցավով թեթև պատմական ակնարկ Արիստոտելի, Վերգիլիոսի, Պլուտարքոսի հայացքների մասին ինքնածնունդի վերաբերյալ, նա անցնում է Թրանսիսկո Ռեդիին, Լեվնհուկին, Պուչին, Սպալանցանուն, ապա քիչ մանրամասն կանգ է առնում Պաստյորի փորձերի վրա։ Բնութագրելով թեր ու դեմ կարծիքները, նա գալիս է հետևյալ եզրակացության. «Ամասիկ ինքնածին սերման հարցն լուծված է և մենք կրնանք ըսել, թե ամեն ապրող մարմին միայն ձուռն մը կըծնի և ոչինչ ինքնաբերաբար չարտագրվելու» (էջ 25—30)։

Իհարկե, Տաղավարյանի վերջնական եզրակացությունը, որ ընում է Պաստյորի կատարած փորձերից, —ճիշտ է։ Պաստյորը վերջ դրեց միայն այն կարծիքին, թե ձևակերպված օրգանիզմը, թեև կուզ խիստ պրիմիտիվ միաբջջի քակտերիան, կարող է առաջ գալ անկենդան նյութներից միանգամից ինքնաբեր ծնունդով։

Հայտնի է, որ Պատարիի փորձերի արդյունքներն օգտագործեցին իդեալիստներն այն ուղղությամբ, որ ժխտեցին առհասարակ կյանքի առաջանալն անօրգանական աշխարհից և առաջ քաշեցին կյանքի մշտնջենականության գաղափարը: Կյանքի ծագման պրոբլեմը համարվեց աստվածաբանական պրոբլեմ, գիտության իրավասությունից դուրս, աստվածային գործ: Սակայն համոզված մատերիալիստներն այդպիսի եզրակացությունների չեկան, նրանք հարցը դրին այլ կերպ, ավելի գիտականորեն, այն է՝ քննարկման հարց դրվեց ոչ թե ձևակերպված, քեկուզ պարզօրոշ օրգանիզմի՝ պնկենդան նյութից անմիջականորեն առաջանալու մասին, այլ ամենապարզագույն կենդանի նյութի՝ կենսալիմբ գանգլիումի առաջացման պրոցեսի մասին՝ անօրգանական նյութերից: Այդպես է դրվում խնդիրը և այժմ:¹

Տաղավարյանը, սակայն, իր ժամանակի ազդեցությունով, չկարողացավ կողմնորոշվել խնդրին, ինչպես պետք է աներ այդ ամեն մի հետևողական մատերիալիստ-գաղվինիստ: Առաջացավ կյանքն անօրգանական աշխարհից, թե՛ աստված ստեղծեց օրգանիզմներին, — այդ հարցին նա պատասխան չտվեց:

Կյանքի ծագման հարցը կապված է դարվինիզմի հետ: Տաղավարյանն էլ չէր անջատում այդ հարցերը իրարից, ինչպես քիչ հետո կտեսնենք՝ նրա «Տարվինականություն» աշխատությունը քննարկելիս:

Տաղավարյանի օրոք դարվինիզմն արդեն ամենուրեք դիտություն կողմից լայնորեն ընդունված էր, թեև կային որոշ գիտնականներ, որոնք դարվինիզմը հաշտեցնում էին իդեալիզմի հետ, սակայն չնայած դարվինիզմի օրեցօր ծավալման, պայքարը դարվինիզմի դեմ շարունակվում էր: Կային դարվինիզմն ընդունողներ, բայց ուսմունքի այս կամ այն դրույթը մեկնաբանում էին իդեալիստորեն. կային բացարձակ հակադարվինիստներ, կային նաև դարվինիզմը կրոնի հետ հաշտեցնողներ:

Ինչ դիրք ըռնեց Տաղավարյանը:

Տաղավարյանն իր բնագիտական կրթությունն ստացավ Ֆրանսիական բնագիտությունից, որոնց մոտ շատերը դեռ պահպանում էին լամարկիստական որոշ տրադիցիաները: Տաղավարյան

¹ Միայն ժամանակակից օրգանիզմն էլ թեև պարզագույն օրգանիզմ է, բայց նա ձևակերպված է այն չափով, որչափ ունի որոշ կազմություն, որոշ մասեր, այսպես կոչված օրգանոիդներ (օրինակ, բջջակերիզ, վակուոլ և ուրիշ): Լ. Գ.

նը դարձալ համոզված, մարտնչող դարվինիստ: Նախ, Եղիա Տեմիրճիպաշյանի «Երկրագունդ» հանդեսում (1884 թ.), ապա իր հիմնած «Գիտական շարժում» բնագիտական հանդեսում (1885) նա տպագրեց իր «Տարվինականություն» հոդվածաշարը, իսկ հետագայում երրորդ անգամ լույս հանեց այդ նյութն առանձին գրքուկով: Թե Սեբաստիայում և թե Պոլսում նա բռնապետ խոսքով էլ տարածում էր Դարվինի ուսմունքը, մեծ հետաքրքրություն առաջ բերելով աշակերտության, ուսանողու-թյան առաջադեմ ինտելիգենցիայի, մասսայական ունկնդիր-ների մեջ, բայց միևնույն ժամանակ ենթարկվում էր կատաղի հարձակումների, հալածանքների խավարամիտ, տղետ կրոնա-կանների, բաղմբերանգ իդեալիստների կողմից:

Այդ առթիվ Տեմիրճիպաշյանը «Երկրագունդ» հանդեսում 1888 թ. դետեղեց մի անստորագիր հոդված («Գավառ և գոր-ծիչը»), Այստեղ նա նշում է, որ «խավարամիտ և չարասիրտ» անձինք «հալածում են» «անձնվեր ազգասեր» երիտասարդ գոր-ծիչներին, որոնց թվում նա հիշում է և Տաղավարյանին: «Այդ երիտասարդաց մին է անտարակույս հանդեսին (այսինքն՝ իր «Երկրագունդ» հանդեսի—Խ. Գ.) եռանդուն ու գիտուն աշխա-տակից Տ. Նազարեթ Տաղավարյան, զոր Սեբաստիա վարժարա-նաց ընդհանուր տեսչութենին հրաժարեցնելու համար անհավա-տալի միջոցների դիմած է Սեբաստիայի ժողովրդյան խավա-րամիտ ու չարասիրտ մասն», Ապա Տեմիրճիպաշյանը թվում է, թե ինչ հանցանքի համար էին հալածում Տաղավարյանին: Դրանք են. առաջին՝ դրական գիտություններ է սովորել և տա-րածում, երկրորդ՝ «հավատ ազգային շրջանակին մեջ աշխատել ուխտած է», երրորդ՝ յուր շուրջն «հավաքած և ժողովրդին ու պրտանի գիտելյաց վրա վառվառն լեզվով բանախոսություններ քրած է», չորրորդ՝ կանանց դաստիարակության գործն պաշտ-պանելով՝ (Հայուհաց ընկերություն մը հաստատած) է Սեբաստիա: Ապա նա հիշում է ևս երկու «եղեռնադոճություն», այն է՝ յուր ամաթաղակին մեկ կարևոր մասն նվիրած է վարժարա-նաց» և վերջապես, ամենամեծ «հանցանքը»՝ «Երկրագունդի» մեջ «հրատարակած է շարք մը ընդարձակ հոդվածաց, ամենաանոր, ամենաբարձր և ամենապիտանի նյութ ժը այն է՝ «Տարվինակա-նության վրա»:

Դարվինիզմ տարածելու պատճառով Տաղավարյանը ոչ միայն որակվեց որպես անաստված, Սեբաստիայում խավարա-

միտներէ բողոքը հասաւ տաճկական կուսակալին, որը՝ կանչելով Տաղավարյանին, ասաց նրան. «Զավակս, դուն կուղես հայեակի ծախել կուլըներուն»¹

Պոլսում շարունակվում են հալածանքները «անաստված» «անհավատ» Տաղավարյանի դեմ: Գանգատն ուղղվում է հոգևոր բարձրագույն օրգանին—աբեղեղիսկոպոս խորեն Նարպէյին: Վերջինս հարցը դնում է Աղգային ժողովի քննութեան: Ժողովում հայտարարվում է, որ «բազմահայ թաղի մը երկսեռ վարժարանաց տեսչութեան կոչված երիտասարդ մը հրապարակով անհավատութիւն կը քարոզէ և կկարծէ թէ մարդիկ կապիկներն սերտած են»: Այս նիստի արձանագրութիւնը տպված է 1885 թ. «Լույս» հանդեսում:

Քննութեան տունէք այժմ Տաղավարյանի «Տարվինականութիւն» աշխատութիւնը:

Դա սեղմ, փոքր ինչ կոնսպեկտիվ, բայց բաղմաթիվ փաստացի նյութերով հագեցած մի աշխատութիւն է, որը շարադրում է դարվինիզմի հիմնական սկզբունքները: Տաղավարյանի աշխատութիւնը հայ իրականութեան մեջ առաջինն էր «Դարվինիզմ» մասին, որ լույս է տեսել Դարվինի մահվանից երկու տարի անց 1884 թվին «Երկրագնդում»: Աշխատութիւնը գրված է առավելապէս ֆրանսիական աղբյուրների աղբիւրքայմով: Այդ երևում է Լամարկին պերագնահատելուց: Չիշտ է, Լամարկը մինչդարմինյան խոշորագույն էվոլուցիոնիստն էր, բայց նրա էվոլուցիոնիզմը ունէր որոշ իդէալիստական դրուժներ, հետեւաբար, երբեք չի կարելի Դարվինի մատերիալիստական ուսմունքը համարել Լամարկիզմի լրացումն:

«Տարվինականութիւնը» կառուցված է հետևյալ պլանով: Աշխատութիւնն սկսվում է թեթև պատմական ակնարկով՝ «Լամարկի, Հուքսի, Գյոթեի, Տրեվիրանուսի, Օկենի մասին»: Երկրորդ գլխում շարադրվում է դարվինիզմի հիմնական սկզբունքները («Գինաց պատերազմ»), «Արհեստական և բնական ընտ-

¹ Ձեռագիր կոնսպեկտիւսում նշվում է, որ «Դժգոհութեան շարունակութեան հետեւում են կուսակալ խալի փաշայի տեղնորդին: Սա գլխաւոր Տաղավարյանի արժանիքը, նույնիսկ նշանակել էր նրան տեղական թուրք վարժարանի քննիչ»: Նույն տեղ ասված է, որ երբ դործը քննում է՝ «լավ կը հասկնա թէ որչափ անիրավ և անտեղի պայքար մըն էր՝ Տաղավարյանի դեմ մղվածը» (էջ 13):

քության—«Գոյության կռիւ բնական աղղակներն», «Սեռական ընտրության», ապա և «Հասկանիշների խոտորման», կամ Տաղավարյանի տերմինոլոգիայով՝ «տարամիտություն հատկությանց» մասին)։

Բաղական ընդարձակ խոսվում է էվոլուցիայի ապացույցների մասին՝ (անատոմիական, սաղմնաբանական, երկրաբանա-մասն-պալեոնտոլոգիական, կենսաշխարհագրական)։ Վերջում քննարկվում են դարվինիզմին արած առարկությունները, ապա և ծանրանում է «կյանքի ծագման» հարցի վրա Ինչպես տեսնում ենք, լրիվ շարադրված են դարվինիզմի բոլոր սկզբունքները։ Սակայն մի կարևոր հարց բացակայում է։ Դա մարդու ծագման հարցն է։ Դարվինիզմն առանց այդ պրոբլեմի շարադրման չի կարող լրիվ և ամբողջական լինել։ Այդ պրոբլեմի մասին Դարվինը միայն ակնարկեց իր «Տեսակների ծագում» աշխատության մեջ (1859 թվին), իսկ սպառնչ լուսաբանեց «Մարդու ծագումը և սեռական ընտրություն» աշխատության մեջ (1871 թ.)։ Դեռևս շարունակվում էր կատարի պայքարը դարվինիզմի շուրջը, կային յուրահատուկ դարվինիստներ, որոնք մարդու ծագման հարցը անջատում էին դարվինիզմից, մարդուն վերագրելով գերբնական, աստվածային ծագում։ Հալածանքների անթարկված Տաղավարյանը ոչ մի տեղ ոչ մի խոսք չի ասել մարդու ծագման մասին։ Իր բանավոր հրապարակային ելույթներում խոսում էր այդ մասին, որի պատճառով և կատարի արջավ սկսվեց նրա դեմ։ Տաղավարյանը հետադառնում էլ այդ մասին չի գրել։ Այդ բացը նա չլրացրեց նույնիսկ իր «Տարվինականություն» գրքի երրորդ, առանձին հրատարակության մեջ, որ լույս տեսավ 1913 թվին։ Ըստ երևույթին՝ նա չէր ցանկանում գրգռել հայ հատարակության խավարամիտ տարրերին։¹

Թեև դարվինիզմն ամենուրեք ճանաչված էր, բայց և այնպես տարածել, ժողովրդականացնել այդ ուսմունքը լայն մասնաների մեջ առանց պայքարի չէր կարելի։ Մանավանդ ուժեղ զիջագրություն, պայքար էր գնում մարդու և կյանքի ծագման պրոբլեմների շուրջը։ Համոզված դարվինիստները Դարվինի որոշ սկզբունքները քողարկված ձևով էին ժողովրդականացնում, իսկ

¹ Սակայն պետք է նշել, որ այդ հարցի նկատմամբ հենց «Տարվինականության» մեջ Տաղավարյանը անուղղակի ճանապարհով դրսևորեց իր ճոհակցումը «Սաղմնախոտական ապացույցներ» գլխում դրած է հետևյալը. «Մյուսներ կ'ըսեն թե՛ «Կենդանյաց սաղմնային վիճակի ձևափոխություն» իրենց երկրաբանական դարերում մեջ կրած ձևափոխությանց համառոտու-

ամանք նույնիսկ դարձինիդմի մի քանի գրույթներին իդեալիստական գունավորում էին տալիս:

Տաղավարյանը թեև համոզված դարձինիստ էր, բայց Դարձինի գնահատման մեջ որոշ չափով ձայնակցեց Ֆրանսիական դարձինիստներին, քողարկված լամարկիստներին: Ահա ինչ է ասում Տաղավարյանը դարձինիդմի մասին. «Այսուամենայնիվ այս բարձր տեսությանը Լամարկի կպարտիք: (Ընդգծումը մերն է—Ռ. Գ.), որու վրա մեծ գովեստուք և սքանչանք կխոսի Տարվին, Հեոքսեյ, Մառթեն...» — Դարձինը երբեք չի սքանչացել Լամարկով, ընդհակառակը հեգնանքով է խոսել Լամարկի իդեալիստական որոշ սկզբունքներին մասին:

Տեսակներին ծագման առթիվ Տաղավարյանը գրում է. «Այս տեսությունը քեպտո Լամարքը հղացված է (Ընդգծումը մերն է—Ռ. Գ.), բայց Տարվինի միջոցով ընդլայնված և հանրացած լինելուն՝ Տարվինիստությունն կանվանի» (էջ 11):

Մի ուրիշ տեղ. «Տարվին Լամարկի տեսակաց ձևափոխության գաղափարը կընդունի, և անոր նման անկարելիություններ կցուցանե տեսակաց և իրենց ցեղերու տեսակաց զանազանության նկատմամբ» (էջ 12):

Վերջապես, Լամարկին գերազնահատելով, նա Դարձինին վերագրում է միայն բնական ընտրության օրենքի լուսաբանությունը: Այսպես, նա ասում է. «Եթե Տարվին Լամարքի տեսության վրա բան մի ավելացուց այն ալ բնական ընտրողականության օրենքն էր, զոր պիտի ջանամ պարզելու աստ» (էջ 14):

Իհարկե, չի կարելի ասել, որ Դարձինը Լամարկի տեսության վրա ավելացրեց միայն ընտրության օրենքը: Դարձինիդմիքը մեջ ընդգրկում է և՛ բնական ընտրությունը, և՛ էվոլուցիայի ապացույցները, որոնք միայն Դարձինը լուսաբանեց մատերիալիստորեն: Տաղավարյանը ներկա դեպքում միայն կրկնեց Ֆրանսիական որոշ դարձինիստների, որոնք լամարկիստական տես-

թյունն է: Խոսքը վերաբերում է Հեկկել-Մուլլերյան բիոգենետիկ օրենքին: Ապա գալով մարդուն, ասում է. «Մարդու սաղմն ալ այս ձևափոխությանց կենթարկվի. համառոտության համար պիտի ըսեմ, թե մարդն նախ ձուկ է սիրտ ունի, ապա սողունի, գորտազգիի, և հուսկ ուրիմն ստանալովի մը:

Ըստ Տարվինի, եթե երկու տարբեր կարգի կենդանիներ իրենց սաղմնային վիճակին մեջ իբրբու շատ կը նմանին՝ կրնանք եզրակացնել, թե միևնույն արմատի ծնունդ առած են» (էջ 35): Տաղավարյանը թողնում է ընթերցողին եզրակացնելու, որ մարդն էլ կենդանիների հետ՝ «միևնույն ազմատի ծնունդ առած են»:

սանկյունով մոտեցան դարվինիզմին, վերջինիս նշանակութունը թերագնահատելով:

Տաղավարյանը, սակայն, համոզված դարվինիստ էր՝ դարվինիզմի բոլոր գրույթներին հետևող, հանուն այդ գրույթներին պայքարող: Իր գրքում Լամարկի մասին նա քիչ է խոսում:

Եթե Տաղավարյանը «Մարդու ծագման» պրոբլեմի մասին միայն բանավոր ելույթներում էր խոսում¹, ապա կյանքի ծագման հարցի մասին թեև ակնարկեց իր «Տարվինականութուն» աշխատության մեջ, բայց ցուցաբերեց այնպիսի մոտեցում, որ երբեք հատուկ չի հետևողական մատերիալիստի, և այստեղ թերևս դարձյալ Տաղավարյանի վրա ազդեց հետևողական մատերիալիստի համար ոչ նպաստավոր հայեական միջավայրը:

Ինքենք այդ հատվածը: Իր հիշյալ աշխատության ամփոփման մասում գտնում ենք այսպիսի հարց ու պատասխան.

«Հարց. Արդ՝ ո՞վ ստեղծեց պարզ էակները:

Պատասխան. Տարվինի և Կլոդ Բերնարի հետ պիտի պատասխանեմ թե դորա պատասխանը գիտության սահմաններեն դուրս է. գիտությունը տեսնվածը միայն կբացատրե, բայց սկզբանց խուլարկությունն աստվածաբանից բաժինն է և ոչ գիտնոցս, և արդեն ավելի մեր գրության համաձայն է, քան հակառակ է ըսել, թե աստված ստեղծած է այդ սկզբնական էակներին և մյուսներին անոնցմե ածանցված են» (էջ 52):

Այստեղ Տաղավարյանը նախ թերի է մեկնաբանում Դարվինին: Դարվինը կյանքի ծագման պրոբլեմով չի զբաղվել, սակայն ոչ այն պատճառով, որ դա «աստվածաբանից բաժինն է», այլ ուղղակի փաստացի տվյալներ չունեի: Դարվինի ժամանակ բիոքեմիան քիչ էր զարգացած, տվյալները կենդանի նյութի քիմիայի վերաբերյալ բավարար չէին: Իսկ Դարվինը, ըստ իր սովորության, առանց շոշափելի փաստերի վճռական ելքակա-

¹ Մարդու ծագման կենդանիների հետ ունեցած նմանության մասին Տաղավարյանը մի քանի անգամ արտահայտվել է իր «Բնական պատմություն» գրքի վերջաբանում: Ինքենք այդ տողերը. «Մարդու մարմնի մասնավոր քննությամբ՝ ոչ միայն ուղղակի կերպով ուսած եղաք կենդանային աշխարհի ամենակարևոր դասն, ստեղծողներն՝ որք զրեթե ամենայնիվ հար ու նման են մարդուն՝ իրենց դասու պետին, այլ նաև կարի իմն դյուրացավ ձեռք համար համայն օղնախոյնոց անհուն բանակին ուսումն, որք երկրորդական տեսակներով միայն կտարբերեն ի մարդկանց» («Բնական պատմություն», Պատար 1-ին, էջ 342), և. Գ.

ցություններ չէր անում: Կյանքի ծագման վերաբերյալ «Տեսակ-
ների ծագումն աշխատութեան մեջ Դարվինը մի քողարկված ան-
հաջող արտահայտութիւնն արեց այն մասին, որ առաջին օրգա-
նիզմներն էր թե ստեղծվել են: Այդ ստեղծվել բառը Դարվինը,
ինչպես ինքը հետո գրեց Լայպլին ուղղված նամակում, գործա-
ծել էր այն իմաստով, թե առաջացել են իրեն անհայտ պատ-
ճառներով: Նույն Լայպլին գրում է, թե զղշում է, որ գործ է
ածել այդ անհաջող բառը: Մի շարք ուրիշ բնագետներին նման,
որոնք ծանոթ չէին Լայպլին ուղղված Դարվինի նամակին, Տա-
ղավարյանն էլ սխալվեց իր մեկնաբանութեան մեջ, իհարկե
իգնաւիտ բնագետներն օգտագործեցին Դարվինի արտահայտու-
թիւնը: Դարվինն ապրում էր այնպիսի շրջապատում, որ ստիպ-
ված էր երբեմն իր աշխատութեան մեջ քողարկել իր իսկական
մատերիալիստական տեսակետը:

Իհարկե, Տաղավարյանը, որ ուժեղ պայքար էր մղել խա-
վարամիտ կղերականների դեմ, նույնպես կարող էր անտեղյակ
լինել Դարվինի նամակին: Տաղավարյանն էլ ճարահատյալ քո-
ղարկել էր իր իսկական հայացքները, չգրելով մարդու ծագման
հարցի մասին (թեև որպես համոզված դարվինիստ, բնավոր
կերպով շատ անգամ արտահայտվել էր լեկցիաներում), իսկ
կյանքի ծագման վերաբերյալ բավարարվել էր կարճ հայտարարու-
թյամբ, օգտագործելով Դարվինի քողարկած արտահայտութիւնը:
Ամիոիները մեր ասածը Տաղավարյանի մասին.

1. Տաղավարյանը մեր անցյալի առաջավոր, բազմակողմա-
նի կրթված բնագետն էր, միաժամանակ բժիշկ և գյուղատնտես:

2. Նա իր կյանքը նվիրել էր հայ ժողովրդի կուլտուրայի
բարգավաճմանը: Բնագիտութիւնը ի սպաս էր դրել ժողովրդի
կուլտուրական, գիտական դաստիարակութեանը, ժողովրդի բա-
րօրութեան բարձրացման գործին:

3. Իր գիտական և գիտա-պոպուլյար աշխատութիւններով
զարկ է տվել գիտութեան զարգացմանը հայկական միջավայ-
րում, նրա բիոլոգիական-բժշկական աշխատութիւնները հարեա-
տացրել են հայ գիտական գրականութիւնը:

4. Նա առաջինն էր, որ հիմնեց զուտ բնագիտական հան-
դես, որով լայնորեն ժողովրդականացրեց բնագիտութեան նվա-
ճումները, բնագիտական սկզբունքային, աշխարհայացքային
պրոբլեմները, որով զարկ տվեց մատերիալիստական աշխար-
հայացքի զարգացմանը:

5. Տաղավարյանն առաջին հայ բնագետն էր, որ ոչ միայն բանավոր խոսքով, այլև սուր գրչով մամուլում պայքար մղեց հանուն մատերիալիստական ուսմունքի՝ Դարվինիզմի։ Նա թեև համոզված, մարտնչող դարվինիստ էր, սակայն Դարվինի գնահատման մեջ աղղված էր ֆրանսիական լամարկիստ բնագետներից։

6. Հայկական հետաքննիչ միջավայրում, խավարածիտ կղերականների հալածանքների շրջապատում, Տաղավարյանը խուսափեց գրել մարդու ծագման մասին, իսկ կյանքի ծագման հարցում քողարկեց իր տեսակետը։

7. Տաղավարյանը բխողդիական, բժշկական աշխատությունների հետ զուգընթաց, գործնականորեն մասնակցեց հայ աղքատիկ բխողդիական և բժշկական տերմինաբանության կերտման և մշակման գործին։

8. Նրա եռանդուն աշխատանքը գործնական կյանքում և բխողդիական, բժշկական, գյուղատնտեսական աշխատությունները խոշոր դեր են կատարել հայ ժողովրդի կուլտուրական մակարդակը բարձրացնելու, մատերիալիստորեն զաստիարակելու գործում, խոշոր չափով բարձրացրել են հայ իրականության մեջ բխողդիական գիտությունների արժեքը, նպաստել բնագիտական և բժշկական կադրերի զարգացմանը։

Р. ГАБРИЕЛЯН

ЗАПАДНОАРМЯНСКИЙ ПЕРЕДОВОЙ НАТУРАЛИСТ-ВРАЧ НАЗАРЕТ ТАГАВАРЯН

Автор подробно освещает жизненный путь передового западноармянского научно-общественного деятеля Назарета Тагаваряна. Полученное естественно-научное, агрономическое и медицинское образование дало возможность Тагаваряну как устно, так и в печати, выступать энергичным и неутомимым борцом во имя материалистических идей в естествознании, а также практически служить своему народу, как видный натуралист-ученый и педагог, как агроном и как врач.

Тагаварян являлся основателем первого научного естественно-исторического журнала на армянском языке. Перу Тагаваряна принадлежат: ряд биологических статей и очерков, затрагивающих проблемы материалисти-

ческого мировоззрения, руководства по естествознанию («Естественная история» и др.), медико-биологические пособия («Эмбриология человека», «Бактериология», «Гигиена» и др.), объемистая работа по животноводству, оставшаяся в рукописи и др.

Н. Тагаварян являлся также энергичным борцом во имя идей дарвинизма в армянской действительности. Особенно большую роль сыграл в этом направлении его биологический очерк, под заглавием «Дарвинизм»

Автор выясняет также роль Н. Тагаваряна в деле создания и развешения армянской биологической и медицинской терминологии.